

Օ Ր Ե Ր Լ Է Ն Ե Ր Ը

Վ Է Գ

ՌԵՃԷ ՌԱՂԷՏԻ

II

Ք Ն Ն Ո լ Թ Ի լ Ն Ը

Հետեւեալ օրը առաւօտը բաւական առաջացած էր, երբ ժան վար իջաւ իր սենեակից, և երեւցաւ վերնազաւթի վրայ, շինուած՝ Սավերնի կարմիր քարից, ինչպէս ամբողջ տունը, որի երկու երկար աստիճաններով սանդուխները նայում էին պարկի կողմը: Նա հազել էր որսորդութեան և զբօսանքի զգեստ, որը ամենից աւելի դուր էր գալիս նրան, սե կաշուէ սրնքակալ, կապոյտ բրդէ վարդիկ և վերարկու և ծածկել էր թաղիքեայ գլխարկ, որի ժապաւէնի մէջ խրել էր վայրի աքաղաղի մի փետուր: Սանդուխների վերեւից հարցրեց.

—Որտեղ է հայրս:

Այն մարդը՝ որին ուղղուած էր հարցումը—ծառուղիի աւազները փոցխող պարտիզպանը—պատասխանեց.

—Պարոնը սղոցարանի գրասենեակումն է:

Երբ ժան Օրերլէ աչքերը բարձրացրեց, առաջին անգամ տեսաւ եղնեայ անտառներով ծածկուած Վոթի լեռները, որոնց խոռոչները լեցուած էին ձիւնի շերտերով, իսկ սարերը վարագուրուած՝ ցածր ու արագասահ ամպերով: Հաճոյքից թրթռաց: Այնուհետև հայեացքը գցեց լեռների, այգեստանների, մարգագետինների վերջին զառիվայրերի վրայ, որպէս թէ կամենար վերստին իր յիշողութեան մէջ դրոշմել այդ վայրերի մանրամասնութիւնները, որոնց նորից էր գտնում երկար բացակայութիւնից յետոյ, նորից էր գտնում, մանաւանդ, այնտեղ բնակութիւն հաստատելու դիտաւորութեամբ: Երկար նայեց սղոցա-

*) Տե՛ս «Մուրճ» № 2—3.

րանի կարմիր տանիքին, որ գրաւում էր Օրերլէնների կալուածքի կենդրոնը, ծխնելոյզները, այն բարձրադիր շինութիւնը, ուր գտնուում էին էլէկտրական մեքենաները, Ալլէյմ գետի աջ ափին, և նրա մօտ, այն շինուածանիւթերի պահեստարանը, որտեղից գործարանն ստանում էր հարկաւոր առարկաները—ամեն տեսակ ծառերի դէզեր, գերաններ, տախտակներ, և մնացեալ այլ իրերը, որոնք ահագին բուրգերի և խորանարդների ձեռով բարձրանում էին օձապտոյտ ծառուղիների և թաւուտների ետեւում, բնակարանից երկու հարիւր մետր հեռու։ Սղոցարանի տանիքի այլ և այլ կէտերից դուրս էին ժայթքում սպիտակ շոգու ցայտերը և երկնքի ամպերի նման՝ հիւսիսի քամուց հալւում, լուծւում էին։

Երիտասարդը ուղղուեց նախ դէպի աջ, անցաւ պարկից, որը զցել և կանոնաւորել էր երբեմն պ. Ֆիլիպ Օրերլէն և որը սկսում էր դառնալ բնութեան մի աւելի ազատ, աւելի ներդաշնակ անկիւն—և յետոյ՝ կաղնիների, կնճնիների և եղևնիների կոճղերի կոյտի առաջից պտոյտ գործելով՝ գնաց թրխկացրեց երկարածիւղ շինութեան վերջին դուռը։

Մտաւ ապակեայ պովիլեօնը, որ գործարանատիրոջ աշխատասենեակն էր կազմում։ Սա զբաղուած էր սուրհանդակից ստացած նամակները կարդալով։ Տեսնելով որդուն՝ թղթերը իսկոյն դրեց սեղանի վրայ, ձեռքով մի նշան արեց, որը նշանակում էր. «ես քո այցելութեան էի սպասում. նստի՛ր», և, թիկնաթոռ մի քիչ յետ մղելով.

—Լաւ, զաւակս, տեսնենք ի՞նչ ունես ինձ ասելու։

Պ. Ժոզէֆ Օրերլէ՝ մի արիւնային, դիւրաթեք և հրամայելու սովոր անձ էր։ Իր ածելուած շրթունքների, կարճ ծնօտամօրուտի, իր զգեստների՝ միշտ մի քիչ բռնազրօսիկ՝ անթերիութեան, և իր շարժումների ու խօսքերի դիւրաբուղիս լինելու պատճառով, նրան ընդունել էին Ֆրանսիացի մի «նախկին դատաւորի» տեղ։ Այսպէս դատողները մեղաւոր չէին։ Մեղաւորը հանգամանքներն էին, որ պ. Ժոզէֆ Օրերլէին հեռացրել էին, հակառակ իր կամքին, այն ճանապարհից, ուր նա կամենում էր մտնել, և որը պէտք է նրան առաջնորդէր դէպի մի որևէ հասարակական, դատային կամ վարչական պաշտօն։ Նրա հայրը՝ գերդաստանի հիմնադիրը, Ֆիլիպ Օրերլէ, որը սերում էր կալուածատէր գիւղացիների մի ցեղից, հիմնել էր Ալլէյմում, 1850-ին՝ այդ մեքենավար սղոցարանը, որը շուտով բարգաւաճեց։ Մի քանի տարուայ ընթացքում, նա դարձել էր մի հարուստ և հզօր հանձնաւորութիւն, ամենքից սիրուած,—որովհետև այդ բան ամար ոչինչ չէր խնայում—և, բացի այդ՝ շատ ազդեցիկ՝ առանցի

ընաւ նախագուշակելու այն դէպքերը, որ նրան պիտի մղէին մի օր իր ազդեցութիւնը գործ դնել Ալզասի օգտին:

Երկրորդ կայսրութեան վերջին տարիներում, այդ գործարանատիրոջ որդին չէր կարող երբէք պաշտօնեայ դառնալու երազից հրաժարուել: Եւ այդ պատահեց: Նա իր դաստիարակութիւնն ստացել էր այդ ուղղութեամբ իսկ: Վաղուց հեռացած Ալզասից, ութ տարի շարունակ Լուի-լը-Գրան լիսէի աշակերտ, յետոյ իրաւաբանութեան ուսանող, քսան երկու տարեկան հասակում, Շարանտի նահանգապետի դիւանում պաշտօնակատար էր, երբ ծագեց պատերազմը: Նրա պետը, իր բարեկամ ալզասեցի մեծ գործարանատիրոջ հաճելի լինել կարծում էր, իր մօտ երկար ամիսներ, Անգուլէմի նահանգապետարանի պատերի ետեւ, վտանգից զերծ պահելով երիտասարդին: Բայց նա՝ իր մասնաւոր խնդրանքով վերջ ի վերջոյ մտաւ Լուառի բանակը: Ժողէֆ Օբերլէ շատ քայլեց, շատ նահանջեց, ցրտից շատ նեղուեց, և կուռեց քաջաբար, հազուադէպ պարագաներում: Երբ պատերազմը վերջացաւ, նա ստիպուեց ընտրութիւն կատարուելու Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ:

Եթէ նրան թողնէին իր սեփական կամքին, նա կը մնար Ֆրանսիացի և կը շարունակէր հետեւել իր վարչական ասպարէզին, որովհետեւ իշխանութեան համա առել էր և ինքն անձամբ չգիտէր, թէ ի՞նչ է նշանակում հպատակուել: Բայց հայրը նրան կանչեց Ալզաս: Պաղատում էր, որ արդէն սկսուած, յաջող գործը բարձի թողի չանէ: Նա ասում էր. «Յաղթանակը՝ իմ ճարտարարուեստը, ինդուստրիան դարձրեց գերմանական: Ես չեմ կարող իմ հարստութեան և ապագայի գործիքը խորտակել: Ես ասում եմ պրուսեացուն, բայց ես վերցնում եմ իմ ձեռքի տակ գտնուող, միակ միջոցը օգտակար կերպով կեանքս շարունակելու համար. Ֆրանսիացի էի, դառնում եմ ալզասեցի: Դու էլ նոյնն արա՛ւ: Յոյս ունեմ, որ դա կը լինի կարճ ժամանակի համար»:

Ժողէֆ Օբերլէ հնազանդուել էր ճշմարիտ զգուհեքով, զգուհեք՝ ապրելու այդ Ալշէյմ գիւղում, կորսուած՝ Վոժերի խորքում: Այդ ժամանակներում, նա բանեցրել էր նոյնիսկ այնպիսի անխոհեմ լեզու, ունեցել էր այնպիսի անխոհեմ վարժուածք, որոնց համար այժմ նա զղջում էր: Որովհետեւ յաղթանակը յաւերժացել էր, Գերմանիայի բախտը աւելի ամուր հիմքերի վրայ էր դրուել և երիտասարդը, իր հօր ընկերանալով և մի գործարանի ղեկավար դառնալով՝ զգացել էր իր շուրջը՝ Ֆրանսիական վարչութեան նման մի վարչութեան օ-

դակնների կազմուհին և սեղմուհի, վարչութիւն, որ աւելի խիստ էր, և գիտէր աւելի լաւ հնազանդեցնել: Նա՛ ի ֆրաս իրան՝ նկատել էր, որ ամեն դէպքում, առանց բացառութեան, գերմանական իշխանութիւնները, ոստիկանները, դատաւորները, այն հանրային պաշտօնեաները, որոնց հետ նա հանապազօրեայ շփումն ունէր, ճանապարհի, երկաթուղու, ջրաբաշխութեան, անտառների, մաքսատան պաշտօնեաները պէտք է միշտ նրան մեղաւոր դուրս բերեն, երբ նրա հետ գործ ունենան: Այն չկամութիւնը, որին նա բաղխում էր, հակառակ գերմանական հպատակ լինելուն՝ ամեն կողմ, գերմանական վարչութեան ամեն բաժանմունքներում, հետզհետէ աճեց և ստացաւ միանգամայն սպառնալից ընաւորութիւն նոյնիսկ Ալլէյմի տան բարգաւաճման համար, այն ըստէից սկսած՝ երբ, 1874-ին, պ. Ֆիլիպ Օբերլէ իր որդուն յանձնելով սղոցարանի ղեկավարութիւնը, տեղի տուեց այդ խեղճ, լքուած՝ երկրի ընակչութեան թախանձանքին, որ ուզում էր կարգել և կարգեց նրան՝ Ռայխստագում իր շահերի ներկայացուցիչը, և Ալզասի բողոքող պատգամաւորներից մէկը:

Կեանքի այդ փորձառութիւնը, սպասումից յոգնելը, պ. Ֆիլիպ Օբերլէի հեռանալը, որ տարուայ մի մասը անց էր կացնում Բերլինում, զգալի կերպով փոխեցին գործարանի երիտասարդ ղեկավարի վարմունքը: Նրա նախկին աշխոյժը, թէ դէպի իր անձը և թէ դէպի ուրիշները, նուազում էր: Տեսնում էր, որ Ալզասի գիւղացիների հակա-գերմանական ցոյցերը հետզհետէ սակաւաթիւ և խոհեմ էին դառնում: Ֆրանսիայի հետ համարեմ ոչ մի գործառնութիւն չէր կատարում: Էլ ոչ մի Ֆրանսիացու այցելութիւն չէր ընդունում, թէկուզ գործի և աւետրի վերաբերեալ: Ֆրանսիան, որը այնքան մօտիկ էր, այնքան դրացի, դարձել էր որպէս մի պարսպապատ, փակ երկիր, որտեղից ոչինչ չէր մտնում Ալզաս, ոչ ճանապարհորդ, ոչ ապրանք: Նրա ստացած լրագրներն անգամ, ոչ մի կասկած չէին թողնում, որ Ալզասը կամաց կամաց լքուում, մոռացւում էր: Ֆրանսիայի որոշ քաղաքագէտները, իմաստութեան և նախապատրաստութեան պատրուակի տակ այդ էին խորհուրդ տալիս:

Տաս տարուայ ընթացքում, պ. Ժոզէֆ Օբերլէ հաստատուած իշխանութեան դէմ գործածել, վերջնապէս սպառել էր ըմբոստութեան այն բոլոր ուժը, որ պարունակում էր իր նրկարագիրը: Նա դարձել էր rallié, այսինքն յարել, միացել էր գերման իշխանութեան: Մոնիկ Բիհլէրի հետ իր ամուսնութիւնը, որ ցանկացել և պատրաստել էր Ռայխստագում

Բիզմարկ իշխանի դէմ քուէարկող ծերունի և կրակոտ հայրենաւէրը, ոչ մի ազդեցութիւն չէր գործել պ. Ժողէֆ Օրբերլէի նոր տրամադրութիւններէ վրայ, որոնք՝ նախ գաղտնի՝ շուտով կասկածելի, յետոյ յայտնի, յետոյ հաստատ դարձան և ապա գայթակղելի կերպով փոփոխեցին ամենքի առաջ: Պ. Ժողէֆ Օրբերլէ այդպիսով գերմանացիներին գրաւականներ, յետոյ պատանդներ էր տալիս: Նա չափն անցկացնում էր: Հնազանդութիւնից շատ աւելի դէնն էր գնում: Գործարանի վերահսկիչները՝ (contremaîtres) որ Փրանսիական նախկին զինուորներ, Պ. Ֆիլիպ Օրբերլէի հիացողները, նրա՝ Ալզասի գերմանացի ման դէմ մղած կռուի ընկերներն էին, նոր գործարանատիրոջ վարմունքից դժգոհ էին, պախարակում էին նրա ընթացքը: Նրանցից մէկը, համբերութիւնից դուրս եկած՝ նրան ասել էր մի օր. «Կարծում էք թէ շատ հպարտ ենք, որ ծառայում ենք ձեզ նման մի ուրացողի մօտ»: Գործարանից արտաքսուել էր: Իսկոյն նրա ընկերները նրա կողմն էին բռնել, միջամտել էին, բանակցել, սպառնացել գործադուլ անել: «Լաւ, գործադուլ արէք, գոչել էր գործարանատէրը. ես չափազանց ուրախ կը լինիմ. դուք տաք-գլուխ մարդիկ էք. ձեր տեղ գերմանացիներ կը դնեմ»: Սպառնալիքին չէին հաւատացել, բայց պ. Ժողէֆ Օրբերլէ՝ քիչ յետոյ իրագործել էր այն՝ տագնապի մի այլ ըուպէում, որպէսզի չասէին թէ թոյլ մարդ է, մի բան, որից նա վախենում էր՝ աւելի՝ քան անարդարութեան մեղադրանքից, և բացի այդ, նա մտածում էր, որ աւելի շահաւէտ է ալզասցիների, հեշտութեամբ ընդվզող այդ մարդկանց տեղ գործածել բազեցիներ և վիւրդեմբերգցիներ, որոնք աւելի կարգապահ են և աւելի համակերպող: Այդպէս, սղոցարանի պաշտօնէութեան մի քառորդը փոփոխուած էր: Գիւղի հիւսիսակողմում հաստատուել էր գերմանական մի փոքրիկ գաղութ, գործարանատիրոջ կողմից կառուցուած տներում. իսկ այն ալզասցիները, որոնք մնում էին, դա պարզապէս իրանց ամենօրեայ հացը ձեռքից բաց չթողնելու համար էր: Այս բոլորը տեղի էին ունենում 1882-ին: Հազիւ մի քանի տարի անցել էր, երբ լսեցին, որ պ. Օրբերլէ իր որդուն՝ Ժանին՝ հեռացնում էր Ալզասից և ուղարկում էր Բավիէր, Միւնխի գիմնազիայում ուսման տալու համար: Նա հեռացնում էր նոյնպէս իր աղջկան՝ Լիւսիէնին, և յանձնում էր նրան՝ ամենաթուղ գերմանականութեամբ տոգորուած մի հիմնարկութեան, Բադէն-Բադէնի գիշերօթիկ Միւնդնէր ուսումնարանի տնօրինուհու խնամքին: Հասարակական կարծիքը ամենից աւելի այս վերջին կարգադրութիւնից վրդովուեց: Նա զայրացաւ ալզասական դատարարակութեան և ազդեցութեան այդ

ուրացումի դէմ: Նա խղճում էր տիկին Օբերլէին, որ բաժանուած արդէն իր որդուց, այժմ էլ զրկւում էր իր աղջկան դաստիարակելու իրաւունքից, որպէս թէ նա անարժան լինէր դրան: Բոլոր նրանց, որոնք պախարակում էին իրան՝ հայրը պատասխանեց. «Ես այդ արի նրանց օգտի համար: Ես կորցրի իմ կեանքը, չեմ ուզում որ նրանք էլ կորցնեն իրանցը: Ապագայում, երբ խելահաս լինին, թող իրանք ընտրեն իրանց ճանապարհը: Բայց ես չեմ ցանկանում, որ նրանք՝ հէնց իրանց երիտասարդահասակից՝ պարիա ալզանեցիների ցանկում դասուեն, դասակարգուեն և պաշտօնապէս արձանագրուեն»: Երբեմն և աւելացնում էր. «Միթէ չէք ըմբռնում, որ այն ամեն զոհողութիւնները, որ ես անում եմ, անում եմ միայն իմ զաւակների համար: Ես ինձ զոհում եմ: Բայց չկարծէք թէ ես չեմ տառապում»:

Նա, արդարեւ, տառապում էր. տառապում էր մանաւանդ նրա համար, որ գերմանական վարչութեան վստահութիւնը չէր կարողանում գրաւել: Այդքան ջանքերը չէին վարձատրւում ցանկալի կերպով: Ծիշտ է, պաշտօնեաները սկսում էին շոյել, սիրաշահել, որոնել պ. Ժոզէֆ Օբերլէին, և նոյնիսկ շատ «Kreisdirectors»-ներ պարծենում էին այդ թանկագին յաղթանակի համար բարձր իշխանութեան մօտ, բայց, այնուամենայնիւ, հսկողութիւնը չէին դադարեցնում նրա վրայից, աշխատելով հանդերձ հաճոյակատար լինել, չափից աւելի պատուել նրան հրաւէրներով: Նա զգում էր վարանքը, հաղիւ ծածկուած՝ յաճախ բրտօրէն ակներև անվստահութիւնը իր նոր տէրերի, որոնց ցանկանում էր դուր գալ: Վստահութեան արժանի էր արդեօք: Արդեօք առանց յետին մտքի՞ վճռել էր գերմանացի դառնալ: Բաւականաչափ հիացում տածձւում էր դէպի գերմանական հանճարը, գերմանական քաղաքակրթութիւնը, գերմանական վաճառականութիւնը, գերմանական ապագան: Պէտք էր շատ հիանալ, ու շատ բաների վրայ:

Այդ հարցերի պատասխանը հետզհետէ դրական էր դառնում: Այդ երևում էր այն ցանկութիւնից, որ նա ունէր իր որդուն՝ Ժանին մտցնելու գերմանական ատենակալութեան մէջ. այդ երևում էր և նրանից, որ երիտասարդին շարունակում էր սխտանամտիկ կերպով Ալզասից հեռու, մի տեսակ հարկադրուած աքսորի մէջ պահել: Իր կլասիկական ուսումը վերջացնելուց, 1895-ի դպրոցական տարուայ վերջերում աւարտման քննութիւնը յաջողութեամբ տալուց յետոյ, Ժան մտել էր Միւնխիսի համալսարանը՝ իբրև իրաւաբանութեան ուսանող: Երկրորդ տարին նա շարունակել էր Բոննի և Հայդելբերգի համալսարաններում, յետոյ իր licence-ի քննութիւնը, Referendar examen-ը

անցկացրել էր Բերլինում: Վերջապէս, չորրորդ տարին Բերլինում մի փաստաբանի մօտ իբրեւ stagiaire, իբրեւ օգնական ծառայելուց, և օտար երկրներում մի երկար ճամբորդութիւն կատարելուց յետոյ, երիտասարդը վերադառնում էր իր հայրենական տունը, որպէս զի նախ քան զինուոր գրուելը մի քիչ հանգիստ վայելէ: Իսկապէս ասած՝ միննոյն մէթոտը մինչև վերջը պահպանում էր: Ուսանողական կեանքի առաջին տարիների ընթացքում, անգամ արձակուրդների ժամանակ, բացի ընտանիքում անցկացրած մի քանի օրերից, նա ճամբորդում էր: Վերջին տարիներում, նա մինչև անգամ ոտք չէր կոխել Ալձէյմ:

Վարչութեան կասկածները վերջ ի վերջոյ փարատուել էին: Ալզասի պաշտօնեաների և պ. Ժոզէֆ Օրերլէի միջև ընդհանուր մերձեցման գլխաւոր արգելքներից մէկը անհետացել էր արդէն: Բողոքող այեղարդ պատգամաւորը, 1890-ին, քաղաքական կեանքից քաշուել էր հիւանդութեան պատճառով: Այդ բոլորից սկսում էին նրա որդու համար ժպիտները, խոստովանելով, ընդերկար թախանձուած շնորհները: Պ. Ժոզէֆ Օրերլէ այժմ համոզուում էր, այն բարգաւաճումից, որ ստացել էին իր գործերը հռնոսեան երկրներում և նոյնիսկ աւելի հետուններում, օրինազանցութեան դէպքում իրա կամ իր գործակատարների դէմ կազմուած տեղեկագրերի նուազումից, ամենափոքր—առաջ ամենից աւելի ամբարտաւան—պաշտօնեաների դէպի իրան շոյալած ակնածութեան նշաններից, այն հեշտութիւնից, որով նա կարգադրել էր վիճելի հարցերը, ստացել թոյլտրութիւններ, ճկել կանոնադրութեան այս կամ այն կէտը—այս և շատ ուրիշ նշաններից նա համոզուում էր, որ կառավարական ոգին, ներկայ՝ ամեն տեղ, ամեն տեսակ տրիդի (galon) մարդկանց մի բազմութեան մէջ մարմնացած՝ նրան այլ ևս թշնամի չէր: Նրան ցոյց էին տալիս բարեացակամութեան աւելի դրական փաստեր: Անցեալ ձմեռ, մինչդեռ Լիւսիէնը Միւնիխէր պանսիօնից վերադարձած՝ սիրուն, սրամիտ, դիւթիչ՝ պարոււմ էր Ստրասբուրգի գերմանական սրահներում, հայրը խօսակցում էր միտերմօրէն կայսրութեան ներկայացուցիչների հետ: Նրանցից մէկը, Ստրասբուրգի նահանգապետը, կոմս ֆոն Կասսըվից, որը հաւանականաբար գործում էր բարձրագոյն հրամանով, հասկացրել էր, որ կառավարութեան անախորժ չէր թուի բնաւ, եթէ պ. Ժոզէֆ Օրերլէ՝ իբր պատգամաւոր իր թեկնածութիւնը դնէր Ալզասի գաւառներից մէկում, և որ վարչութիւնը կիսապաշտօնապէս իր աջակցութիւնը չէր զլանայ բողոքող նախկին պատգամաւորի որդուն:

Այս հեռապատկերը պ. Օբերլէին հրճուեցրել էր: Վերականգնացրել էր փառասիրութիւնը այդ մարդու մէջ, որ մինչև այժմ իր արժանապատուութեան, իր բարեկամութիւնների, յիշատակների զահաբերութեան համար շատ խղճուկ կերպով վարձատրուել էր: Այդ հեռապատկերը՝ հանգամանքների պատճառով ընկճուած պաշտօնեայի այդ խառնուածքին տալիս էր մի որոշ նպատակ, վերադարձնում էր նրան իր նախկին ուժն և պահանջկոտութիւնները: Պ. Օբերլէ նրանում տեսնում էր իր ծածուկ արդարացումը: Նա մտածում էր, որ շնորհիւ իր կորովի, իր արհամարանքի դէպի ցնորքը, իր պայծառատեսութեան՝ թէ ի՞նչ բան կարելի էր և ի՞նչ բան անկարելի, կարող էր յուսալ իրա համար մի ապագայ, հասարակական կեանքի մէջ մասնակցութիւն, մի դեր, մի գործունէութիւն, որը կարծում էր թէ վերապահուած է միայն իր որդուն: Եւ այսուհետև, եթէ երբէք կասկածը զար պաշարել իր միտքը, այդ պատասխանը բաւական էր ամեն տարակոյս չբացնելու, բաւական էր իր վրէժը հանելու մի քանի սգէտ գիւղացիների համար նախատինքից, որ դիտմամբ նրան չտեսնել էին ձևացնում, երբ հանդիպում էին ճանապարհին, և մի քանի ստրագբուրգցի կամ ալլէյմցի բուրժուաների վիրաւորանքից, որ նրան բարևում ու չէին բարևում:

Ուրեմն իր որդուն պիտի ընդունէր հոգեկան մի այնպիսի տրամադրութեամբ, որը բոլորովին տարբեր էր անցեալից: Այսօր, երբ գիտէր, թէ Ալգաս-Լուէնի կառավարութեան մօտ ինքը մեծ յարգանք ու համարում է վայելում, այնքան էլ փոյթը չէր, որ իր որդին կէտ առ կէտ գործադրէր իր նախապէս գծած ծրագիրը: Ժան իր հօր ծառայութիւն մատուցել էր արդէն, ինչպէս Լիւսիէնն, որ մատուցանում էր: Նա եղել էր մի շարժառիթ, մէկն այն պատճառներից, որոնք առաջ էին բերել գերմանական վարչութեան կարծիքի այնքան ակնկալուած փոփոխութիւնը: Անկասկած նրա գործակցութիւնը դեռ ևս օգտակար կարող էր լինել, բայց ոչ անհրաժեշտ, և հայրը, իր որդու Բերլինից գրած վերջին նամակների մէջ թագնուող մի քանի ակնարկներից և լռելեայն հասկացրուած մտքերից գուշակում էր—ակնարկներ և մտքեր, որոնք նրան էլ չէին զայրացնում այնքան, որքան առաջ—որ իր որդին, գուցէ չհետևի այնչափ խնամքով պատրաստուած գերմանական ատենակալութեան ասպարէզին, և գուցէ հրաժարուի փաստաբանի մօտ վերջին երեք տարուայ ծառայութեան պտուղներից և պետական քննութիւններից:

Սրանք էին անհա խորհրդածութիւններն այն մարդու, որը

իր կեանքում առաջնորդուել էր զուտ եսասիրութիւնից, այն բոլորէին, երբ նա պատրաստուում էր իր որդու այցելութիւնն ստանալ, որովհետեւ նա ժանին նշմարել էր՝ և տեսել, որ նա գալիս է պարկի միջով: Պ. Օրերլէ իրա համար շինել էր տուել, սղոցարանի մի ծայրում, մի տեսակ վանդակ, կամ նաւի կամրջակ (paserelle), որտեղից կարող էր ամեն բանի վրայ հսկել: Մի պատուհանը նայում էր դէպի շինագործարանը, chantier-ն: Այդ պատուհանից պ. Օրերլէ դիտում էր շինագործարանը փայտ փոխադրող կամ այնտեղից փայտը տեղափոխող մարդկանց շարժումները: Մի ուրիշը՝ բաղկացած ապակեպատ կրկնակի շրջանակից, գործարանատիրոջ թոյլ էր տալիս հետեւելու հաշուապահներին, որոնք իր սենեակի համանման մի սենեակում, պատի երկարութեամբ նստած՝ աշխատում էին: Երրորդից, այսինքն ապակեայ միջնորմից, որ նրան բաժանում էր արհեստանոցից, իր աչքի առաջ պարզւում էր ամբողջ գործարանի անսահման սրահը, ուր ամեն տեսակ մեքենաներ, թոկերով շարժող սղոցներ, ատամնաձև անիւներ և ատաղձագործի զանազան գործիքներ ողորկում, կտրում, ծակում էին ծառի կոճղերը, որ մեքենայէս դրւում էին նրանց առաջ: Պ. Օրերլէ շրջապատուած էր ջրագոյն կանաչով ներկուած, ցածր տախտակորմերով, էլէկտրական, մանիշակաձև լամպերով, ձայնատու կոճակներով, որ շարուած էին պղնձեայ մի սկուտեղի վրայ, որը կազմում էր գրասենյանի ճակատը, մի հեռախօսով, մի գրելու մեքենայով, սպիտակ ներկուած, թեթև աթոռներով, որոնք ցոյց էին տալիս, թէ նա սիրում է յստակ գոյները, կեանքի յարմարութիւններ ընձեռող նորութիւնները և դիւրաբեկ տեսքով առարկաները:

(Կը շարունակուի)